ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 380-Ա
« 18 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՄՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. Վարչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 1-ի N29 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «գ» ենթակետը և Բագրատ Պետիկի Բագրատյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Բագրատ Բագրատյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2025 թվականի օգոստոսի 1-ի N29 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2025 թվականի դեկտեմբերի 19-ը:
2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Բագրատ Բագրատյանի լիազորությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Սամսոնյանի վրա:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Բագրատ Պետիկի Բագրատյանին ծանուցելու օրվան հաջորդ օրվանից:

12/18/2025

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք. Եղեգնաձոր